ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025 թվականի № 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 21-ՐԴ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով և 61-րդ կետի 8-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի սովորողներին անվանական կրթաթոշակների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 21-րդ նիստում հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի սովորողների անվանական կրթաթոշակների հատկացման կարգը:

3. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման սովորողները շարունակում են ստանալ հաստատված անվանական կրթաթոշակները 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
21.04.2025 թ. թիվ 9 որոշման

Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի սովորողներին անվանական կրթաթոշակների հատկացման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) սովորողներին անվանական կրթաթոշակների (այսուհետ՝ կրթաթոշակ) հատկացման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Կրթահամալիրի՝ ոստիկանությունում և փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով իրականացվող՝ բակալավրիատի և միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրերով առկա անվճար ուսուցման սովորողներին կրթաթոշակների հատկացման կարգը և պայմանները:

II. ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2. Կրթահամալիրն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու կրթաթոշակներ:
3. Կրթաթոշակի անվանումը, աղբյուրը, ֆոնդը և սովորողների ցուցակը հաստատում է Կրթահամալիրի գիտական խորհրդը:
4. Կրթաթոշակ նշանակվում է Կրթահամալիրի՝ ոստիկանությունում և փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով իրականացվող՝ բակալավրիատի և միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրերով առկա անվճար ուսուցման այն սովորողներին, ովքեր նախորդ ուսումնական տարվա քննաշրջաններին ստացել են գերազանց գնահատականներ, ցուցաբերել են կարգապահություն և հասարակական ակտիվություն:
5. Կրթաթոշակի հավակնորդ սովորողների թեկնածությունները քննարկում են ոստիկանական, փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանումների խորհուրդներում, վերջիններիս վերաբերյալ հիմնավորված եզրակացությունները ներկայացվում են Կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժին:
6. Կրթաթոշակի հավակնորդների ցուցակը ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժինը ներկայացնում է Կրթահամալիրի գիտական խորհրդի հաստատմանը: Կրթահամալիրի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ

հաստատում է այն, որի հիման վրա Կրթահամալիրի ռեկտորը տալիս է համապատասխան հրաման:

7. Կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում:

8. Ուսումնական տարվա ընթացքում կարգապահական խախտման համար տույժի ենթարկված սովորողին կրթաթոշակի հատկացումը դադարեցվում է Կրթահամալիրի ռեկտորի հրամանով: